

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2014 թ.

N 201-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ
ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել պաշտպանական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌ-ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության առանձնահատկությունները:

2. Պաշտպանական նշանակության անտառները միջավայրը կայունացնող և կարգավորող կարևոր գործոն են, և ունեն դաշտապաշտպան, այգեպաշտպան, ճանապարհապաշտպան, կլիմայակարգավորիչ, ջրակարգավորիչ, հակաէրոզիոն, կենսաբազմազանության պահպանության ու հանգստի (ռեկրեացիոն) գործառույթներ և առաջնահերթ օգտագործվում է բնակչության մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակով:

3. Պաշտպանական նշանակության անտառներում չի թույլատրվում իրականացնել երկրորդական անտառանյութի մթերում և անտառավերականգնման հատումներ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված մնացած անտառօգտագործման տեսակները թույլատրվում է, եթե դա չի հակասում տվյալ անտառահատվածի պաշտպանական նշանակությանը:

4. Պաշտպանական նշանակության անտառներում բնափայտի մթերումը իրականացվում է միայն խնամքի ու սանիտարական հատումների ժամանակ՝ հիմք ընդունելով անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) պահանջները, հատման գծով բնափայտի տարեկան նորման (հաշվարկային հատատեղը):

5. Պաշտպանական նշանակության անտառներում կարող են իրականացվել նաև այլ հատումներ: Անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտը մթերվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին համապատասխան:

6. Պաշտպանական նշանակության անտառներում միջանկյալ (խնամքի) և սանիտարական հատումների ժամանակ բնափայտի մթերման և անտառից դուրսբերման ժամանակ անտառօգտագործողը պարտավոր է պահպանել անտառային ոլորտը կարգավորող իրավական ակտերի և անտառօգտագործման պայմանագրի պահանջները:

7. Պաշտպանական նշանակության անտառներում կարող է իրականացվել ոչ բնափայտային անտառանյութի մթերում՝ անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի հիման վրա, իսկ անտառային հողատարածքների օգտագործումը գյուղատնտեսական նպատակով՝ վարձակալության պայմանագրի հիման վրա, մինչև նույն ժամանակ հաշվի առնելով օգտագործվող անտառատարածքի պաշտպանական նշանակության ապահովվումը:

8. Ոչ բնափայտային անտառօգտագործման պայմանագրի հավելվածներում նշվում են՝

- 1) անտառօգտագործման հիմնական պարամետրերը և նորմերը.
- 2) անտառային ռեսուրսների ոչ բնափայտային անտառանյութի ֆոնդը.
- 3) ոչ բնափայտային անտառանյութի անտառային պաշարների մթերման թույլատրելի ծավալը և քանակը.
- 4) օգտագործման տրամադրվող անտառային տեղամասի տարածքային տեղադիրքի նկարագիրը, քարտեզագրական կամ սխեմատիկ պատկերը.
- 5) անտառների պահպանությանը, պաշտպանությանը և վերականգնմանը վերաբերվող դրույթները:

9. Պաշտպանական նշանակության անտառների ջրային օբյեկտների ջրապահպան գոտիներում արգելվում են՝

- 1) ջրային ռեժիմի խախտում առաջացնող ցանկացած գործողություն.
- 2) թունաքիմիկատների օգտագործումն անտառների պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.
- 3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը:

10. Պաշտպանական նշանակության անտառներում կենդանիների վերարտադրության կազմակերպումն ու օգտագործումն իրականացվում է անտառօգտագործման պայմանագրի հիման վրա՝ «Կենդանական աշխարհի մասին» և «Որսի ու որսորդական տնտեսության վարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների համաձայն:

11. Կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակով անտառօգտագործման պայմանագրի հավելվածներում նշվում են՝

- 1) որսահանդակների նկարագիրը (անտառային քարտեզ-սխեման).
- 2) տեղեկություններ որսի օբյեկտ հանդիսացող կենդանական աշխարհի տեսակների և դրանց պահպանության համար անհրաժեշտ միջոցառումների մասին.
- 3) օգտագործման տրամադրվող անտառային տեղամասի տեղադիրքի նկարագիրը, քարտեզագրական կամ սխեմատիկ պատկերը.
- 4) անտառների պահպանությանը, պաշտպանությանը և վերականգնմանը վերաբերվող դրույթները:

12. Պաշտպանական նշանակության անտառներում գիտահետազոտական և ուսուցման նպատակով անտառօգտագործումն իրականացվում է անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի հիման վրա:

13. Գիտահետազոտական և ուսուցման նպատակով անտառօգտագործման պայմանագրի հավելվածներում նշվում են՝

- 1) գիտահետազոտական և ուսուցման ոլորտի գործունեության ծրագիրը.

2) օգտագործման տրվող անտառային տեղամասում նախատեսվող աշխատանքների ծավալի և տեսակների հիմնավորումն ու նկարագիրը.

3) օգտագործման տրամադրվող անտառային տեղամասի տեղադիրքի նկարագիրը, քարտեզագրական կամ սխեմատիկ պատկերը.

4) անտառների պահպանությանը, պաշտպանությանը և վերականգնմանը վերաբերվող դրույթները:

14. Պաշտպանական նշանակության անտառներում մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակով անտառօգտագործումն իրականացվում է անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի հիման վրա:

15. Մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակով անտառօգտագործման պայմանագրի հավելվածներում նշվում են՝

1) օգտագործման տրվող անտառային տեղամասում նախատեսվող աշխատանքների ծավալի և տեսակների հիմնավորումն ու նկարագիրը.

2) օգտագործման տրամադրվող անտառային տեղամասի տեղադիրքի նկարագիրը, քարտեզագրական կամ սխեմատիկ պատկերը.

3) անտառների պահպանությանը, պաշտպանությանը և վերականգնմանը վերաբերվող դրույթները:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված այլ պաշտպանական նշանակության, անտառների պահպանության և անտառօգտագործման հետ կապված սույն կարգով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են անտառային ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված ընդհանուր հիմունքներով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ